Հավելված N 10

# Տ Ա Ր Ե Կ Ա Ն   Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ, ԲՆԱԿԱՆՈՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Հանձնարարականի կատարվելիք աշխատանքների և միջոցառումների համառոտ նկարագիրը | Կատարման պատասխանատուն | Համակատարողը | Ժամկետը | 2015թ. ֆինանսավորման աղբյուրը և պահանջվող գումարը |
|---|---|---|---|---|---|---|
| **<u>1 Կառավարման համակարգի կատարելագործում</u>** | | | | | | |
| 1.1. | «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման համակարգի կատարելագործում | Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի գետերի ջրերի աղտոտվածության մոնիթորինգի իրականացում, միջոցառումների մշակում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) | 2015 թ. և շարունա կական | «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատար վող «Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի ծառայություններ» ծրագրի շրջանակներում, Անտառմաքրման ենթակա տարածքների հարակից համայնքները |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում հիդրոկենսաբանական և հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի իրականացում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) | | «Հայպետհիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից 2015թ. ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոօդերևութաբանական աշխատանքների ծրագրին համապատասխան |
| | | Սևանա լճի ավազանի ինժեներաերկրաբանական և սեյսմաշրջանացման դիտարկումների իրականացում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2015թ. և շարունա կական | Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն |
| **<u>2. Սևանա լճի ջրհավաք ավազանի բնապահպանական և բնօգտագործման գործառույթների կատարելագործման միջոցառումներ</u>** | | | | | | |
| 2.1. | Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանք ների իրականացում | Լճի շրջակայքի շուրջ 93 հա անտառաշերտերի մաքրում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան | 2015 թ. և շարունա կական | ՀՀ պետական բյուջե՝ 125400,0 հազ.դրամ<br><br>«Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններ» ծրագրի շրջանակներում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2.2 | Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի տարածքում մարզերի և համայնքների՝ ըստ ոլորտների սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագրերի մշակում | Արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, էներգետիկայի, կապի, տուրիզմի, քաղաքաշինության և բնապահպանության ոլորտների զարգացման միջոցառումների մշակում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն | Մարզպետներ, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2015 թ. և շարունակական | Միջազգային ֆինանսավորման առկայության դեպքում |
| 2.3 | Ձկան պաշարների համալրում | Արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության ապահովում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ Գեղարքունիքի մարզպետ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) | 2015թ. և շարունակական | ՀՀ պետական բյուջե՝ 60000,0 հազ դրամ «Ձկան պաշարների համալրման ծառայություններ» ծրագրի շրջանակներում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2.4 | «Սևան» ազգային պարկի պահպանություն, պարկում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ | Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանություն, վերարտադրություն, գիտական ուսումնասիրություններ և շրջակա միջավայրի դիտանցի իրականացում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) | 2015թ. և շարունակական | ՀՀ պետական բյուջե՝ «Սևան» ազգային պարկի պահպանություն, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ ծրագիր՝ 267,861.7 հազ. դրամ |
| 2 .5 | Սևանա լճի ջրհավաք ավազանում հանքավայրերի շահագործման արդյունքում խախտված հողատարածքների ռեկուլտիվացիա | Տարածքների վերականգնման աշխատանքների նախագծերի մշակում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան | 2015թ. և շարունակական | Ըստ անհրաժեշտության՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից, գումարը՝ ըստ գույքագրման արդյունքների |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2.6 | Սևանա լճի ջրհավաք ավազանում կենդանական ռեսուրսների վերականգնում և ջրային ռեժիմի պահպանում | Ձկների ձվադրման վայր հանդիսացող գետերում էներգետիկ նպատակներով կառուցված գլխային ջրառ կառուցվածքներում ձկնանցարանների վերականգնում և ջրային ռեժիմի պահպանում | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2015թ. | ՓՀԷԿ շահագործող ընկերություն |
| 2.7 | Աբու-Դաբիի զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագրի շրջանակներում Արփա-Սևան թունելի վթարային հատվածների վերականգնման աշխատանքների ավարտում | Արփա-Սևան ջրատարի կայուն օգտագործումը ապահովող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագրի իրականացում | ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե | | 2015թ. և շարունակական | ՀՀ կառավարության համաֆինանսավորում, Աբու-Դաբիի զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագիր՝ 1,356,952.4 հազ. դրամ: |